ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N *ՀՀՌ-ՄԱԱՊՁԲ-19/01*

ք. Երևան 04.12.2018թ.

<<ՀՀ մամուլի տարածման գործակալություն>> ՓԲ ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Ա.Մխիթարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մի կողմից, և <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>>ՓԲ ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով Գնորդին հանձնել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պարբերական մամուլը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Մատակարարն Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալով:
2.2 Մատակարարը Ապրանքը մատակարարում է մինչև պայմանագրի ավարտն ընկած ժամանակահատվածում ըստ Հավելված 1-ով նախատեսված պայմաններով:
2.3 Պայմանագրի կատարման վերջնաժամկետ 31.12.2019թ.:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝
3.1.1 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի պայմաններին չհամապատասխանող Ապրանք՝
ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,
բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ, պահանջել Մատակարարից վճարելու սույն պայմանագրի 6.4 կետով նախատեսված տուգանքը,
գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:
3.1.2 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝
ա) հրաժարվել հանձնված Ապրանքից և պահանջել վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:
3.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է սույն պայմանագրի պայմանները՝
3.1.4.1 Մատակարարի կողմից պայմանագրի պայմանների խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:
3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:
3.2 Գնորդը պարտավոր է՝
3.2.1 կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,
3.2.2 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:
3.3 Մատակարարն իրավունք ունի՝
3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը,
3.3.2 Գնորդից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,
3.3.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագրի պայմանները՝
3.3.3.1. Գնորդի կողմից պայմանագրի պայմանների խախտելն էական է համարվում, եթե խախտվել է Ապրանքի համար վճարման ժամկետները:
3.4 Մատակարարը պարտավոր է՝
3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում,
3.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում,
3.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,
3.4.4 Գնորդին հանձնել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,
3.4.5 առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը,
3.4.6 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,
3.4.7 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Պայմանագրի գինը կազմում է _539500_(հինգ հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

4.2Սույն պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը, ներառյալ ԱԱՀ, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածում:

4.3 Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն համաձայնագրով:

4.4 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.5 Վճարումը կատարվում է սույն պայմանագրի 5 կետում նշված հանձման-ընդունման արձանագրությունը, ակտը և հաշիվ-ապրանքագիրն երկկողմանի ստորագրելուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում:

5. Ապրանքի հանձնումը և ընդունումը

5.1 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

5.2 Մատակարարն Ապրանքը հանձնելիս Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի (հավելված N 2.1) և հաշիվ-ապրանքագրի երկուական օրինակ:

5.3Գնորդը՝ հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը ստանալու պահից երկու օրվա ընթացքում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության, ակտի և հաշիվ-ապրանքագրի մեկական օրինակները կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունն (հավելված N 2) և ակտն երկկողմանի ստորագրելու պահից:

5.5 Ապրանքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը Գնորդին է անցնում սույն պայմանագրով սահմանված կարգով Ապրանքի հանձնման-ընդունման արձանագրությունն և ակտն երկկողմանի ստորագրելու պահից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը <<ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ>>

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ կատարումը:

8.2 Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ:

8.3 Սույն պայմանագրի թվով մեկ հավելվածը հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.4 Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերն ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8.6 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

8.7 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	Մատակարար
<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 5 ՀՎՀՀ՝ 01541435 <<Արդշինբանկ>> ՓԲԸ Հ/Հ 2470103477780000	<<ՀՀ մամուլի տարածման գործակալություն>> ՓԲԸ Հասցե՝ ք. Երևան, Մասունցի Դացթի հրապարակ 2 ՀՎՀՀ 00401345 <<Արարատբանկ>> ԲԲԸ Հ/Հ 1510001986720100
Գործադիր տնօրեն՝ _____ Մ.Գրիգորյան	Գործադիր տնօրեն _____ Ա.Մխիթարյան

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

2019թ. N ՀՀՌ- ՄԱԱՊՁԲ -19/01

մատակարարման Գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Ապրանքի												
										մատակարարման			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը		չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը	
1	22211300/527	պարբերական մամուլ		« Հայաստանի հանրապետություն» օրաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 1 հատ տարեկան առավերագույնը 261 հատ	հատ	100	26100	261	Ք.Երևան Ա.Մանուկյան 5	261	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը	
2	22211300/528	պարբերական մամուլ		« Առավոտ» օրաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 2 հատ տարեկան առավերագույնը 521 հատ	հատ	200	104200	521	Ք.Երևան Ա.Մանուկյան 5	521	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը	
3	22211300/529	պարբերական մամուլ		« Ազգ» շաբաթաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 1հատ տարեկան առավերագույնը 52 հատ	հատ	200	10400	52	Ք.Երևան Ա.Մանուկյան 5	52	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը	

4	22211 300/53 0	պարբե բական մամուլ		« Հայկական ժամանակ» օրաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 2 հատ տարեկան առավերագույնը 521հատ	հատ	200	104200	521	Ք.Երև ան Ա.Սան ուկյան 5	521	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը
5	22211 300/53 1	պարբե բական մամուլ		« Հայոց աշխարհ» օրաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 1 հատ տարեկան առավերագույնը 261 հատ	հատ	200	52200	261	Ք.Երև ան Ա.Սան ուկյան 5	261	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը
6	22211 300/53 2	պարբե բական մամուլ		« Հրապարակ» օրաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 2 հատ տարեկան առավերագույնը 521 հատ	հատ	100	52100	521	Ք.Երև ան Ա.Սան ուկյան 5	521	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը
7	22211 300/53 3	պարբե բական մամուլ		« Ժողովուրդ» օրաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 1 հատ տարեկան առավերագույնը 261 հատ	հատ	100	26100	261	Ք.Երև ան Ա.Սան ուկյան 5	261	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը
8	22211 300/53 4	պարբե բական մամուլ		« Գոլոս արմենիի» օրաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 1հատ տարեկան առավերագույնը 156 հատ	հատ	150	23400	156	Ք.Երև ան Ա.Սան ուկյան 5	156	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը
9	22211 300/53 5	պարբե բական մամուլ		« Ժամանակ» օրաթերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 1 հատ տարեկան առավերագույնը 261 հատ	հատ	200	52200	261	Ք.Երև ան Ա.Սան ուկյան 5	261	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը
10	22211 300/53 6	պարբե բական մամուլ		« Իրավունք» թերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 1 հատ տարեկան առավերագույնը 156 հատ	հատ	100	15600	156	Ք.Երև ան Ա.Սան ուկյան 5	156	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը

11	22211300/537	պարբերական մամուլ		« 168 ժամ» թերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 2 հատ տարեկան առավերագույնը 313 հատ	հատ	200	62600	313	Ք.Երևան Ա.Մանուկյան 5	313	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը
12	22211300/538	պարբերական մամուլ		« Իրատես» թերթ 2019 թ. բաժանորդագրություն	Յուրաքանչյուր տպագրությունից ստացվող օրինակների քանակը 1 հատ տարեկան առավերագույնը 104 հատ	հատ	100	10400	104	Ք.Երևան Ա.Մանուկյան 5	104	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2019թ-ի դեկտեմբերի 31-ը

Գնորդ

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 5
ՀՎՀՀ՝ 01541435
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470103477780000

Գործադիր տնօրեն՝

Ս.Գրիգորյան

Մատակարար

<<ՀՀ Մամուլի տարածման գործակալություն>>ՓԲԸ

ՀՎՀՀ 00401345
<<Արարատբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 1510001986720100

Գործադիր տնօրեն՝

Ա.Մկիթարյան

Հավելված 2
2019թ. N ՀՀՌ- ՄԱԱՊՁԲ -19/01

մատակարարման Գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
<<Մամուլի տարածման գործակալություն>>
ՓԲԸ_____
գտնվելու վայրը _____
Հ/Հ _____
ՀՎՀՀ 00401345_____
Գործադիր տնօրեն Ա.Մխիթարյան_____

Պատվիրատու
Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՓԲԸ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
Հ/Հ 2470103477780000
Գործադիր տնօրեն՝ Մ.Գրիգորյան
ՀՎՀՀ 01541435

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1

2019թ. N ՀՀՌ- ՄԱԱՊՁԲ -19/01

մատակարարման Գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն